

**ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԵՍ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՀԲԸՄ
ՎԱՉԷ ԵՒ ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ**

Փաստափնայի ՀԲԸՄ Վաչէ եւ Թամար Մանուկեան Երկրորդական Վարժարանի 2010-2011 տարեշրջանի բացման հանդիսութիւնը տեղի ունեցաւ Չորեքշաբթի, Սեպտեմբեր 1ի առաւօտ:

Առաջնորդարանի Երիտասարդաց Վարիչ՝ Արժ. Տ. Աւետիս Քհնյ. Աբովեան Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայացուց, կատարեց օրուան յայտագրի բացման եւ փակման աղօթքը եւ Առաջնորդ Սրբազան Հօր ողջոյններն ու լաւագոյն մաղթանքները փոխանցեց տնօրէնութեան, հոգաբարձական եւ ուսուցչական կազմերուն եւ աշակերտութեան: